ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Անի Բալյան, Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2023 թվականի հոկտեմբերի 2-ից 13-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություն դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելների միջոցով» թեմայով դասընթացին, որը նվիրված է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության համար անհրաժեշտ դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (DSGE) մոդելների կառուցմանը, օգտագործմանը և արդյունքների մեկնաբանմանը: Մասնակցությունն անհրաժեշտ էր որպեսզի մասնակիցը տիրապետի DSGE մոդելների սկզբունքներին, կարողանա կիրառել դասընթացի ընթացքում մշակված DSGE մոդելները՝ տարբեր քաղաքական և տնտեսական որոշումների կայացման գործընթացներում, մեկնաբանել դրանց արդյունքները, բացահայտել մոդելների առավելություններն ու սահմանափակումները, սկսել կառուցել մոդելներ՝ հիմվելով երկրի տվյալների վրա: Ձեռք բերված գիտելիքները կնպաստեն ֆիսկալ ռիսկերին առնչվող մոդելների մշակմանը, ինչպես նաև՝ ֆիսկալ ռիսկերի հաշվետվության բարելավմանը:

5. Քննարկված թեմաները՝

1. Իրական բիզնես ցիկլի ելակետային մոդել,
2. Նոր քեյնսյան ելակետային մոդել,
3. Աշխատանքի շուկայի կոշտությունները Նոր քեյնսյան մոդելում,
4. Նոր քեյնսյան մոդելը բաց տնտեսության համար,
5. Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություններ DSGE մոդելներով,
6. Ֆինանսական աքսելերատորը Նոր քեյնսյան մոդելում,
7. DSGE մոդելների թվայնացում,
8. DSGE մոդելների կալիբրացիա և գնահատում,

9. Կանխատեսումներ DSGE մոդելներով և քաղաքականության կիրառություն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացով նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ մշակված գործիքակազմով ներկայացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով: Յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ: Մասնավորապես, որպես դասընթացի ամփոփում, ներկայացվել է վերլուծություն Ռումինիայի դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելների օրինակով՝ յուրաքանչյուր խմբի կողմից իրականացվելով impulse-response-ների վերլուծություն, ինչպես նաև ներկայացվել են քաղաքականության բարելավմանը վերաբերող առաջարկներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

18 հոկտեմբեր, 2023թ.